



## Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պրոֆ.-դոկտ. Ա. Գ. Առաքելյան,

«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՏԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» աշխատության հրկրորդ հատորը՝ Առաջին հատորը լուս է տեսել 1959 թվականին:

XIV—XIX դ. դ. առաջին կեսը.

Բատոր Երկրորդ, Հայպետհրատ, Երևան, 1964 թ., 646 էջ:

Վերջերս Երևանի Հայպետհրատը լուս ընդացեց պրոֆ.-դոկտ. Ա. Գ. Առաքելյանի «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն» աշխատության հրկրորդ հատորը։ Առաջին հատորը լուս է տեսել 1959 թվականին։

Ընթերցողի սեղանին է զրված բազմավաստակ գիտնականի ուշագրավ և բազում տեսակի հանարկով կարենոր ուսումնասիրությունը։

Այս անգամ ևս հարգելի հեղինակը ուսումնասիրել է Հայ և օտար բոլոր աղբյուրները, արխիվները, գրականագիտական ու բանասիրական աշխատությունները, որոնել, ճշտել և արժեքավորել այն ամենը, ինչ գտել է, ինչ կապ ունի ուսումնասիրվող ժամանակաշրջանում մեր ժողովրդի հոգեւոր, մտավոր զարգացման հետ, ընթերցող հասարակության ներկայացնելու համար, հնարավոր և մատչելի շափով, Հայ մշակույթի պատմությունը իր ամբողջական պատկերի և նվաճումների մեջ։

Հեղինակը կարողացել է ընդհանուր և ճիշտ հայտարարի բերել բանասիրական նյութը, հայտնված թեր ու դեմ կարծիքները, գրական վերլուծություններն ու պատմագիտական տեսությունները։

Այս իմաստով նույնական ուշագրավ է աշխատության երկրորդ հատորը, որ կան դարաշրջանի ճշմարիտ պատկերը զծող բնութագրումներ, պատմա-բանասիրական նույրը և խորունկ դիտողություններ, որոնցով Հարգելի հեղինակը ջանում է որոշել ժամանակաշրջանի պատմական, քաղաքական, հասարակական և գրական նկարագիրը։

Հեղինակը մեծ պատասխանատվությամբ և գորգուրանքով է մոտեցել իր նյութին, տվել զարաշրջանի հոգերանությունը, պատմական իրադարձությունները, ժամանակի ոգին և պահանջները, երևույթների ներքին կապերի առողջ զգացողությունը և այդ բոլորի մեջ վեր հանել Հայ մշակույթի բուն արժեքը։

Ողջ աշխատության մեջ երևում է նյութի խոր իմացություն, մտքի նրբություն, ներքին մեծ սեր և ներհայեցողություն, նկարագրելու ճաշակ, պատկերավոր ոճ և պատմելու շնորհ։

Պրոֆ. Առաքելյանը այս անգամ էլ կատարել է երկարամյա գիտական, բանասիրական մեծ ու շնորհակալ, բարեխիղճ ու խստապահանջ աշխատանք։

Գրախոսվող աշխատությունը բաժանվում է երկու մեծ մասերի։

ա) Սոցիալական կյանքի պայմանները ֆեռալական Հայաստանում XIV—XVIII դարերում, որն ունի հետեւյալ ստորաբաժնումները։

1. Հայ ժողովրդի վիճակը XIV—XVIII դարերում։

2. Հայաստանի վարչական բաժանումը և իրավական դրությունը պարսկա-օսմանյան տիրապետության ժամանակ։

3. Հողային հարաբերությունները և Հարկերը Հայաստանում։

4. Հայ զուրացիությունը։

5. Քաղաքաները։

6. Արհեստները և արհեստական կագմակերպությունները։

7. Հայ ժողովրդի վիճակը պարսկա-օսմանյան տիրապետության ժամանակ.

8. Ազատագրական շարժումները Հայաստանում XIV—XVIII դարերում (Էջմիածնի խորհրդակցություն, Խորայել Օրի, Դավիթ-բեկ), Հայ-ռուս հարաբերություններ).

9. Հայ գաղթավայրեր:

Բ. Հայ ժողովրդի մտավոր մշակույթը XIV—XVIII դ. դ., որն ունի հետևյալ ստորաբաժնումները.

1. Հայ ժողովրդական բանահյուսություն.

2. Հայկական տպագրություն.

3. Քաղաքական գրականություն.

4. Բժշկություն (26 հեղինակ).

5. Պատմություն (ժամանակագրություն և պատմագրություն, 53 հեղինակ):

Հատորի վերջում դրված է Ա. և Բ հատորների անձնանունների ցանկը (էջ 612—647):

Գրախոսվող աշխատության առաջին մասում, հեղինակը հանգամանորեն խոսում է մոնղոլական արշավանքների ժամանակ և ապա թուրքական և պարսկական բռնապետության լծի տակ Հայ ժողովրդի ժամանք, ողբերգական վիճակի, հարկերի, կոփի ու բեկարի, մանկահավաքի (գեշիրմե) մասին: Բոռնության և հարկերի ժամրության տակ ռտընքացող ժողովրդի համար կյանքը դարձել էր կատարյալ գեհեն» (էջ 29):

Ստեղծած ժամունական կացությունից դուրս գալու համար, տառապահար Հայ ժողովրդի գիտակցության մեջ «պայծառությունը էր գոյություն ունեցող իրադարձությունից ազատագրվելու ձգտումը» (էջ 58):

Ստեղծանու Սալմաստեցին գումարում է Էջմիածնի առաջին ժողովը 1547 թվականին՝ ոչ աշխատանի ծանր դրության և ազատագրման հարցության նվիրված: Միքայել Սեբաստացին ծվրոպա է ուղարկում 1562 թվականին մասնավոր պատգամավորություն: «Այս անգամ շարժմանը մասնակցում է նաև Արևմտյան Հայաստանը. նշանակում է շարժումը կրում է համահայկական բնույթ» (էջ 62), — արդարորեն եղարկացնում է հեղինակը: Հակոբ Զուղայեցին Էջմիածնի երկրորդ գաղտնի ժողովից հետո (1678), Խորայել Օրին ուղարկում է Եվրոպա: «Օրին հանդիսանում է ոռուսական հունակուն զատագովը և այդ շարժման գաղափարախոսը XVIII դարի հայ հասարակական-քաղաքական կյանքում» (էջ 74):

Դրբի հաջորդ էջերում (74—223) հեղինակը սպառիչ կերպով խոսում է Հայ ազատագրական շարժման մեծ գործիչների՝ Խորայել Օրու, Ավան յուղացու, Եսայի կաթողիկոս Հասան Զալալյանցի, Սարգիս դի Պետրոս Գիլանեցի, Հովհաննեսի արքափակուսու Արդությանցի, Հովհաննես Լազարյանի, ժողո-

վրդական ընդվառումների, Դավիթ-բեկի հայթական կոփիլների, Շահկերտի ապստամբության, Մագրասի հայրենասեր խմբակի քաղաքական գործունելիքան, Հովհաննեսի կմինի և Հայ-ռուսական դաշինքի երկու նախագծի մասին:

Հայաստանում ժավալվող ազատագրական շարժումներին զուգընթաց, երկրում ստեղծված ծանր պայմանները մյուս կողմից բաց են անում գաղթականության դռները Հայ ժողովրդի առաջաջարօն (էջ 175):

Հեղինակը գառնությամբ և ծանր սրտով շարադրել է իր աշխատության մեջ (էջ 175—223) Հայ նոր գաղթօջախների տիպուր պատմությունը, հայրենասիրական մորմորով. «մեր տարաբախտ ժողովրդի պատմությունը հարուստ է գերեվարության և արտագոյթի արցունքությունը» (էջ 176):

Կամավոր ու բռնի գաղթերի հետևանքով ստեղծվում են նոր հայկական գաղթօջախներ Կոստանդնուպոլիսում, նոր Զուղայում, Հընդկաստանում, Լիոնում, Կամենիցում, Ստանիսլավում, Տրանսիլվանիայում, Աստրախանում, Ղրիմում, նոր Նախիջևանում, Խուլիյում և այլուր:

Գաղթօջախները փորձում են ոտքի կանգնել հայրենիքից հեռու, օտար ափերի վրա, հիմնում են եկեղեցիներ, վանքեր, բացում դպրոց, տպարան և իրենց համեստ, սրտագին ավանդը մուծում Հայ մշակույթի գանձարանը, բայց ոմանք ժամանակի ընթացքում կտրվելով Մալր Երկրից, կորցնում են իրենց ազգային ոգին, նկարագիրը, կապվում են տեղական բնակչության հետ և առհավետ կորչում Հայ ժողովրդի և Հայ մշակույթի համար:

Գրքի երկրորդ բաժնում խոսվում է XIV—XVIII դարերի հայ ժողովրդի մտավոր մշակույթի մասին:

Հարգելի հեղինակը աշխատության այս բաժնի առաջին մասում (էջ 224—270) խոսում է միջնադարյան Հայ ժողովրդական երգերի ծագման, ստեղծման, ձևավորման և բովանդակության մասին, նշում, որ ռերգի ու բանաստեղծության առաջին և մեծ հեղինակը հանդիսանում է ժողովուրդը և Հնագույն երգերի մեջ արտահայտվել է աշխատանքը (էջ 224): Հեղինակը քննության է առնում Հայ ժողովրդական բանահյուսության շուրջ հայտնաված գրականագիտական տեսակետները, քննադատաբար օգտագործելով այս մասին գրված Հայ և օտար բանասիրական աշխատությունները:

Պրոֆ. Ա. Առաքելյանը հմտությամբ ուսումնասիրել է ժողովրդական երգերի տպաշափական արքեստը, կառուցվածքը, բովանդակությունը և նշանց աղերսը հոգեսոր

երգերի հետ: Միջնադարյան հայ ժողովրդական երգերը, որպես բռն ժողովրդի ստեղծագործություններ, արտահայտել են իրենց մեջ հայ ժողովրդի կյանքը, աշխարհազգացողությունը, կյանքի փիլիսոփայությունը, կրոնական ըմբռումները, ժողովրդի ուրախությունն ու վիշտը, հուզմն ու հավատը գալիք պայծառ օրերի մասին: Այս իմաստով առաջին եռվարդ ժողովրդական երգերի մեջ պատկանում է պանդստի երգերին, ինչպիսիք են «Տաղ կորնկին», «Կոռոնկի, ուստի կուգաս», «Վայրի հաւիկ մի եմ բռնած», «Կաքաւն ի քարին նստեր», «Տաղ գամն զարիպութեան», «Տաղ ի կերայ պուլպուլին»:

Գրքի հաջորդ էջերում (270—333) ամբողջական ձևով և գիտական հիմնավորումով տրվում է հայ տպագրության պատմությունը 1512—1860 թվականներին, հրատարակությունների ժամանակագրական կարգով և վերլուծությամբ:

Հեղինակը ազգային հպարտության հասկանալի և քայլցր զգացումով նշում է, որ որ տպագրության պյուսից (1455) 57 տարի հետո, տպագրվում է առաջին հայերեն գիրքը 1512 թվականին (էջ 371): Ընթերցողը սույն աշխատության մեջ սպառի տեղեկություններ կդառնի հայերեն առաջին հինգ հրատարակությունների, առաջին տպագրի Հակոբը Մեղապատի, հայոց տպագրի Հակոբ Մեղապատի, հայ տպագրության մյուս երախտաշատ գործիչների՝ Արգար Դպիր Եղողիկիցու, Հովհաննես Տերզոցու, Հովհաննես Անկյուրացու, Մատթեոս Շարեցու, Ոսկան վարդապետ Երևանցու, Վենետիկի, Հոռմի, Նոր Զուղայի, Ամստերդամի, Լիվոնոյի, Մարսելի, Կոստանդնուպոլիսի, Եջմիածնի, Հնդկաստանի, Աստրախանի, Պետերբուրգի, Լազարյան, Ներսիսյան դպրոցների, Թիֆլիսի, Շուշու, Բաքվի և այլ գաղղոջախների տպարանների պատմության մասին:

«Քաղաքական գրականություն» բաժինը (էջ 333—374) սկսում է Մազրասի քաղաքական ծանոթ խմբակի հրատարակած երեք աշխատությունների՝ «Որոգայթ փառաց», «Նոր տետրակ որ կոչի յորդորակ», «Տետրակ, որ կոչի նշաւակ» (1773) ուսումնասիրությամբ, գրեթե բովանդակության վերլուծությամբ և նրանց հեղինակի հարցերով, Մովսես Բաղրամյանի, Հակոբ և Շահամիր Շահամիրյանների հայրենասիրական գործունեության գնահատությամբ և նրանց քաղաքական ուղղության բացահայտմամբ:

Գրքի հաջորդ էջերում «Բժշկություն» ենթակերնագիրը կրող բաժնում (էջ 374—441) խոսվում է միջնադարյան հայ բժշկագիտության մեջ Մխիթար Հերացոց հետո 26 այլ հայ ականավոր բժիշկների և նրանց գրական ժառանգության մասին, սկսած Ամիրդովլաթ

Ամասիացուց (մահացած 1496) մինչև Ստեփանոս Շեհրիմանյան թիֆլիսեցի թժիշկը, XVIII դարի հայ բժշկության հայտնի գեմքերից մեկը (ծնված 1755 թվականին): XV—XVIII դարերի ընթացքում հայերեն լեզվով գրվել են ինքնուրույն և թարգմանական շուրջ 60 բժշկական գիտական աշխատություններու: Մեծ է եղել հայ բժիշկների ավանդը այդ դարերի հայ մտավոր մշակութի զարգացման գործում:

Գրախոսվող աշխատության վերջին ենթագլուխը կրում է «Պատմություն» վերնագիրը (էջ 441—589), որն ունի Ժամանակագրություն (շուրջ 46 հեղինակ) և Պատմագրություն (7 պատմիչ) ստորաբաժանումները:

Մեր հին մատենագրության կարևոր ճյուղերից մեկն է եղել պատմագրությունը, ժամանակագրությունը, սկսած մեր գրականության առաջին շրջանից և շարունակված մինչև XVIII դարի վերջը:

XV—XVIII դարերը հարուստ են մանավանդ ժամանակագրական տարեգրություններով: Տարեգրները արտահայտել են իրենց երկերում ժամանակաշրջանի հասարակական ողջ կյանքը, «Հակիրճ, բայց կոնկրետ դրսեվորել են ժամանակի իրականությունը իր բոլոր մանրություններով, և դա կյանքն է իր շարժման մեջ» (էջ 508):

XVII դարի հայ պատմագրության բացառիկ և կարևոր գեմքերից մեկն է Առաքել Դավրիժեցին. «Խորենացու հայրենասիրության ոգին անցել է այդ գարդապետին» (Արելյան, «Հայ գրականության պատմություն», թ, էջ 448):

Պրոֆ. Ա. Առաքելյանը Դավրիժեցուն և նրա պատմությանը նվիրել է 21 էջ: Հեղինակը հանգամանորեն խոսել է նաև Գրիգոր Դարանաղեցու, Զաքարիա սարկավագ Քանաքեցու, Աբրահամ Երևանցու, Աբրահամ Կրետացու, Խաչատուր Զուղայեցու և նսայի կաթողիկոս Հասան Զալալյանցի կյանքի, պատմագրությունների, ժամանակագրությունների մասին: Հասկանալի չէ, թե ինչո՞ւ հարգելի հեղինակը դուրս է ձգել Սիմեոն Երեանցու «Թամրութի»:

Պրոֆ. Ա. Առաքելյանի «Հայ ժողովրդի մտավոր մշակութի զարգացման պատմությունը» աշխատության երկրորդ հատորը և մենայուն, արժեքավոր գործ է, արդյունք բազմավաստակ հեղինակի բազմակողմանի զարգացման, մանկավարժական, գիտական երկարամյա գործունեության, քրոնացան ստեղծագործական պրատումների: Վերոհիշյալ աշխատության մեջ պրոֆ. Ա. Առաքելյանը ձեռնհասորեն և հեղինակարար ուսումնասիրության է ենթարկել XIV—XVIII դարերի մեր մշակութի զարգացման, գաղափարական

բովանդակության և գնահատման հարցերը սպառիչ վերլուծությամբ; Առողջ են հեղինակի խորհրդածությունները, գիտական պըրպըրումների, զացմունքների ակունքը; Հարգելի հեղինակը մեր մշակութային և մատենագրական որոշ երևույթների, գործիչների, պատմիչների մասին անում է նոր, հետաքրքրական, յուրահատուկ գիտողություններ, գնահատումներ և ճիշտ, արժեքավոր ընդհանրացումներ:

Անհրաժեշտ էր, որ հեղինակն իր սույն աշխատության մեջ ևս առանձին գործի նվիրեր XV—XVIII դարերի հայ գիլիսոփայական մտքի զարգացման պատմության, ինչպես այդ արել էր առաջին հատորում (էջ 561—661); Ժէ դարի վերջերին հայ գիլիսոփայական մտքի պայցծառ ներկայացուցիչներից մեկն է Ստեփանոս Լեհացին (մահացած 1699 թ.), Արիստոտելի «Մետաֆիզիկա»-յի առաջին և միակ հմուտ վերծանողն ու թարգմանիչը, Պրոֆ. Առաքելյանը լի խոսել նաև տվյալ ժամանակաշրջանի հայ արվեստի (ճարտարապետություն, քանդակագործություն, նկարչություն—էջմիածնի Հովհաննեանյան դպրոց,—երաժշտություն, թատրոն) մասին, հայ մշակութի վառ օջախների՝ Հարանց անապատի, Բաղեշի, Ամրդոլու համալսարանի, Էջմիածնի, Կոլոտյան (Կ. Պոլսում) դպրոցների մասին; Տեղին էր, որ Մադրասի քաղաքական խմբակի գործունեության մասին խոսելիս, հանգամանորեն նշվեր նաև «Աղդարար»-ի՝ առաջին հայ պարբերականի հրատարակությունը (1794), որպես մշակութային բացառիկ երևույթ, և որով «հայ ազգը մտնում էր քաղաքակիրթ ազգերի ընտանիքի մեջ» (Լեռ, «Հայոց պատմություն», Գ, էջ 1049):

Ժէ դարի մեր մեծ ու վաստակավոր մատենագիրներից է Հակոբ պատրիարք Նալյանը: Արժեր, որ հանգամանորեն խոսվեր նրա մասին, մանավանդ նրա «Գիրք ծանուցման» (Հրտ. 1758) հոյակապ և հայրենասիրական

աշխատության վերջին երկու գրքերի մասին: «Մեզանում,—գրում է Լեռն, —այս առաջին փորձն էր մի ամբողջական ազգային պատմություն կազմելու... ի դեմս այս համեստ աշխատության, մենք կարող ենք ողջունել հայոց ամբողջական պատմության փոքրիշտեկ հաջող առաջին փորձը... մի հատկություն որ հետո պիտի ընդարձակեն Միթթարյանները» (Լեռ, «Հայոց պատմություն», Գ, Երևան, 1946, էջ 953): Հ. Մ. Զամշյանի «Պատմութիւն Հայոց» աշխատության Ա հատորը լուս էր տեսնում Վենետիկում 1784 թվականին միայն:

Այս վրիպումներն ու մոռացումները իհարկե չեն պակասեցնի գրախոսվող աշխատության գիտական արժեքը:

Պրոֆ. Ա. Առաքելյանի նոր աշխատության հիմնական արժանիքներից մեկը նաև նրա կենդանի, բարախուն շոմնչն է, հայրենասիրությունը: Ամբողջ աշխատությունը գրվել է խանդավառությամբ, կրոպտությամբ: Գիտական լուրջ, խորունկ վերծանության կողքին՝ քնարական վառ զեղումներ և խորհրդածություններ: Աշխատությունը, ինչպես առաջին հատորը, հայ Մշակույթի մեծ համայնագիտարան է, որն ընթերցվում է հարածուն հետաքրքրությամբ, հեղինակի լեզուն կենդանի է, պատկերավոր, ճոխ, ոճը ինքնատիպ:

Աշխատության վերջում տրված է Ա և Բ հատորների անձնանունների ցանկը (էջ 612—642), որ բազմապատկում է հրատարակության գիտական արժեքը:

Պրոֆ. Ա. Առաքելյանի գրախոսվող աշխատությունը գիտական արժեքավոր ավանդ է հայ մշակութի պատմության ուսումնասիրության բնագավառում և հայագիտության մեջ:

Թագմավագստակ գիտնականին մաղթելով երկար, քաշառող կյանք, սիրով և երախտագիտությամբ սպասենք հաջորդ երկու հատորներին:

Ա. Հ.

